ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am, www.foi.am

31.01.2025
354-71

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միքաելյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ ծառայողական ավտոմեքենա է հաշվառված Ձեր գերատեսչությունում 2025 թ.-ի հունվարի 30-ի դրությամբ: Խնդրում ենք տրամադրել տեղեկությունն ըստ մակնիշների, մոդելների և արտադրման տարեթվի, ինչպես նաև տեղեկություն, թե որ պաշտոնյային և/կամ ստորաբաժանմանն են կցված այդ ավտոմեքենաները:
2. Քանի՞ ծառայողական ավտոմեքենա է հաշվառված եղել Ձեր գերատեսչությունում 2024 թ.-ի նոյեմբերի 24-ի դրությամբ:
3. 2024 թ.-ի ընթացքում քանի՞ նոր ծառայողական ավտոմեքենա է ձեռք բերել Ձեր գերատեսչությունը, խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր ավտոմեքենայի գնման մրցույթի հիմքերը, պայմանագրերի պատճենները, գնված ավտոմեքենաների արժեքը:
4. Քանի՞ ծառայողական ավտոմեքենա է կրճատվել 2024 թ.-ի նոյեմբերի 24-ից մինչև 2025 թ.-ի հունվարի 30-ը ներառյալ ժամանակահատվածում: Խնդրում ենք տրամադրել տեղեկությունն ըստ մակնիշների, մոդելների և արտադրման տարեթվի, ինչպես նաև տեղեկություն, թե որ պաշտոնյային և կամ ստորաբաժանմանն են կցված այդ ավտոմեքենաները:
5. Խնդրում ենք տրամադրել այդ ծառայողական մեքենաների կրճատման վերաբերյալ իրավական ակտերի պատճենները:
6. Որքա՞ն է եղել ծառայողական մեքենաները սպասարկող վարորդների թիվը 2024 թ. նոյեմբերի 24-ի դրությամբ:
7. Քանի՞ վարորդ է կրճատվել 2024 թ.-ի նոյեմբերի 24-ից մինչև 2025 թ.-ի հունվարի 30-ը ներառյալ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան